№ 187 ԵՐԵՔՇԱԲԹԻ 26 ՕԳՈՍՏՈՍԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԱՄԱԳՈՒԼԱՅԻՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 26 ՕԳՈՍՏՈՍԻ № 187

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվան և 7 ամսվանը 6 րուբլի. ամսականն 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ. 5 կՕպ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Բաժանորդագրութիւն ընդունվում է ամեն ժամ
Բաժանորդագրութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տարածի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 4 ՐՈՒԲԼԻ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուգարկողների ներկայացուցիչները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿՐ ԹՈՂՆՎԻՆ ԱՆՀԵՏԻԱՆՑ։

Բաժանորդագրութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

1914 թվի տարեկան բաժանորդավճարը 10 րուբլին, ՁՐԻՒՒԲԱՐ կը տանեան հետևեալ 2 գրքերից մէկին ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» վրձինի։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԳԷՈՐԳԵԱՆ ՁԵՄԱՐԱՆՈՒՄ

վերաքննութիւններն ու նոր դէպերի քննութիւնները սկսվելու են սեպտ. 1-ից։

(ե.) առ. 788. 2—2

Կովկասի Հ. Բարեգործ. Ընկերութիւնը ՀՐԱՒԻՐՈՒՄ Է՝

ա) Խուզապետ ապատարանի համար ԿԱՌԱՎԱՐՁՈՒՀԻ, մէջնակարգ կրթութեամբ, մանկավարժական փորձառութեամբ և մտաւոր ու բարոյական հետ ծանօթ անձնաւորութիւն։

բ) Իր նպատակով պահվող գաւառական դպրոցների համար արտօնութիւն ունեցող ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ և ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐ։

Ինդիրները ընդունվում են ամեն օր, գրասենեակում, ցերեկը 8—1 ժ., երեկոները 6—8 ժ. (Աբասե-Абасская № 7)։ Ատրպրդի քարտուղարին կարելի է տեսնել երեկոյան ժամը 7—8-ը։

(Հ.) առ. 806. 2—1

ՊՐՕՖԻՄՆԱՋԻՕՆ Կ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Պետական պրօֆիմ նագիաների իրաւունքներով։ Տղաների և աղջիկների միատեղ ուսուցում։

Բացվում է IV դասարան։ Վերաքննութիւնները՝ օգոստոսի 30-ին և սեպտ. 1-ին, ընդունելութեան քննութիւնները՝ սեպտեմբերի 2-ին, 3-ին և 4-ին, մաղթանքը՝ 5-ին, ուսման սկիզբը՝ 6-ին։ Սերգիևսկայա փ. ս. տ. № 20։

ատ. (19,26,30,2) 765. 5—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ

վերադառնալով վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. պլօմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի։

Ընդունելութիւնը ամեն օր.
Առաւ. 9—2 ժ.
երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
Լերմոնտովսկայա փողոց № 1. մուտքը նրբափողոցից։
առ. (ս. ե.) 804. 0—2

ԲԺԻՇԿ

Շուշանիկ Նաբաթեան

(մանուածէա կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)

վերադառնալով Կովկասի հանքային ջրերից՝ կը վերսկսէ հիւանդների ընդունելութիւնը սեպտեմբերի 10-ից։ Հասցէն՝ Սօլօլակի Բարիշեվսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.

(հ.հ.կ.) առ. 784. 25—3

Ս. ԵՍԱՅԵԱՆԻ

ընտանիքում կարող է ընդունվել մէկ կամ երկու փոքրահասակ Գիշերօթիկ տղայ առաջիկայ ուսումնական տարվանից։ Բնակարանը գտնվում է Զերքեզովսկայա փող. № 3, Վօլոնցովի աբձանից ոչ հեռու։ Պայմանների մասին խօսել անձամբ «Մշակի» խմբագրատան, ժ. 10-ից մինչև 2-ը ամեն օր։

առ. 805. 3—2

ԲԺՇԿԱԿԱՆ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

վերադառնալով՝

վերսկսեց ՆՈՐԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն, առանձնապէս կրծքի, երոքերի, ՊՈՒՅՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՅՈՒՐՏԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ԳՆԴՎԱՕՑՈՒԱԿՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարները լուսատուրված ՐԵՆՏԳԵՆԵՆ ՁԱՆԹԱՑԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր. 9—1 ժամ ցերեկ. և 5—7 ժ. երեկոյեան. 2ՔՍԻՈՐՆԵՐԻՆ ԱՌ. ժ. 9—10 2Րի։ Бебутовская 23. тел. 7—92.

առ. 798. 5—3

ԲԺՇԿԱԿԱՆ

ԳԷՈՐԳԲԷԿԵԱՆ

ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ՝ վերսկսեց աչքի հիւանդութիւնները ունեցողների ընդունելութիւնը։ Վելիամինովսկայա փողոց, № 8. Տէլէֆօն 13—49.

(օ. մ.) առ. 785. 3—3

ԲԺ. Ա. ՇԽԵԱՆ

վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը։ Գանձակայա փող. № 23.

(օ. մ.) առ. 769. 5—5

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հետ. Գործ.)

22—24 օգոստոսի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՌԱԶՄԱԿԱՑԱՆ

ԿՕՊԼԻՆՀԱԳԷՆ. — Աւստրիական գինուորական շտաբի պաշտօնական հաղորդագրութիւնը մեղմացած դարձուածքներով է յայտնում աւստրիացիների պարտութիւնը, ընդգծելով ռուսական արտիլերիայի քանակի գերազանութիւնը, ռուս զօրքերի քաջութիւնն ու յամառութիւնը։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Հաղորդում են, որ Ռուսաստանին մօտ գտնվող սահմանային շրջանում Գերմանիան փորել է բազմաթիւ խրամատներ, դրել է արհեստական արգելքներ և այլն։

Ստացված տեղեկութիւնների համաձայն, էդկունէնը համարեա ամբողջովին հրդեհվել է։ Տաալիպենէնը զերծ է մնացել։ Գուսբինէնը, Ինսբուրգը, Պիլկալէնը և Գոլդապը տուժել են սակաւ։ Մեր ձեռքն են ընկել քարածուխի և զանազան նիւթերի պաշարներ։ Կայարաններում մեր ձեռքն են անցել աւելի քան 150 ապրանքատար վագոն։

Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի շտաբի կողմից.

«Ռուս կուրներ տեղի են ունենում Լիւբլինի և Խօլմի ուղղութեամբ։ Աւստրիական 10-րդ զօրաբանակը, որ փորձեց կարել մեր զօրքերի շարքերը, գտնվող զօրաճակատում մենք առաջացանք. առանձնապէս քայքայվեց Թշնամու կենտրոնը Կրասնօստավից դէպի արևմուտք. շրջապատվեց և անձնատուր եղաւ աւստրիական 45-րդ գունդը իր հրամանատարով, 44 օֆիցէրով և 1600 զինուորով։

«Գերմանական մի զօրամաս, որ գնում էր աւստրիացիներին օգնութեան, ենթարկվեց յարձակման Վիսլայի ձախ ափին։ Մենք գրաւեցինք Սաբին։ Մեր հեծելազօրը գտնվում է կարպատեան լեռնաշղթայի անցքերում։ Արևելեան պրուսական զօրաճակատում տեղի են ունենում միայն մասր ընդհարումներ»։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մեր զօրքերն ընդհանուր արշաւանքի են ձեռնարկել Վիսլայի և Բզուի միջև եղած զօրաճակատում։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԱՏՐԱԴԱՏԵՑ

ԱՄՍՏԵՐԴԱՄ.—(Ուշացած)։ Երէկ Մալինը ենթարկվեց երկաւ ժամ տևող Թնդանօթաձգութեան։ Պայթեցին մօտ 100 շրապնէլներ, որոնք սոսկալի աւերածութիւններ գործեցին։ Սկեղեցին գրաւեալ վերատեսչի կոյսերի Դեղարուեստի շատ թանգագին իրեր, բարերաղաբար, ազատեցին Ս. Բոմբոի ապաքը փոխադրվեց Վավը, Բուբէնի «Աշխարհութիւն» և «Մագերի երկրագործութիւնը» պատկերները աւտօմօբիլով տարան Անտվերպէն։ Ականատեսները սոսկալի բանաբանութիւններ են պատմում գերմանացիների բարբարոսութիւնների մասին։ Լուվէնում գերմանացիք գնդակահարել են համալսարանի ռեկտորին, քաղաքապետին և քաղաքային վարչութեան անդամներին։

ԼՕՆԴՕՆ.—Օստենդէից հեռագրում են, որ գերմանացիք ռմբակոծեցին Տէրմօնդը։

Ամստերդամի լրագրերի ասելով, Լուվէնի հազարաւոր ընակիչներ ուղարկված են Գերմանիա։ Նրանք մեզադրվում են գերման զօրքերի վրա կրակելու մէջ։ Ճանապարհին մի բէլգիացի խելագարվեց և յարձակվեց պահապան-զինուորների վրա. նա հրացանազարկ եղաւ իր ընկերների հետ։

Մանուլի բիւրօն երեկ. ժ. 11 ու 30 ր. հրատարակած բիւլլետէնի մէջ ասում է, որ ֆրանսիական պատերազմաբեմում էական փոփոխութիւն չը կայ։ Դաշնակից զօրքերը մնում են իրանց դիրքերում։ Ցուցմունքներ կան, որ վերևան զօրքերը դիմում են դէպի արևելք և հարաւ-արևելք։

ՊԱՐԻԶ.—Համաձայն պաշտօնական հաղորդագրութեան, գերմանական և ֆրանսիական զօրքերի շարժումները շարունակվում են։ Օրվայ ընթացքում՝ Թշնամին ոչ մի գործողութեան չը դիմեց ֆրանսիական դիրքերի դէմ, ինչպէս և երէկ։ Գերմանացի օդաչուները խուսափում են թռիչքներ կատարելուց Պարիզի վրա։

«Matin»-ի ասելով, դէպի Պարիզ արշաւող գերման զօրքերի հրամանատարն է գնում գեներալ ֆօն-Կլուկը։

ԲՕՐԴՕ.—Հրատարակվեց վիւռօրական միւնիտրութեան հետևեալ հաղորդագրութիւնը. «Մեր ձախ զօրաթևում Թշնամին, ըստ երևոյթին, թողնում է Պարիզը մի կողմում, նպատակ ունենալով գալ թիկունքից։

«Գերմանացիք հասել են մինչև Ֆերտէ-Սուժուարա, անցել են Ըէյմսը և շարժվել են դէպի արևմուտք Արգոնի անտառից։ սակայն դրանով նրանք այնքան էլ չեն առաջացել։

«Մեր աջ զօրաթևում, Լօթարինգիայում և Վոգէզներում, յամառ կռիւները շարունակվում են փոփոխական յաջողութեամբ։ Մօրէժը խիստ ամրակոծվում է Թշնամուց, բայց եռանդով դիմադրում է»։

ԼՕՆԴՕՆ.—Օստենդէից տեղեկացնում են, որ տաք կռիւ է տեղի ունենում Ալոստի և Տէրմօնդի միջև։ Գերմանացիք պայթեցրել են երկաթուղագծի մասը, որի պատճառով Բրիւսսէլից դիմող ճանապարհորդները հարկադրված են լինում վերադառնալ։ Նիւօվի մօտերը գերմանացիք հրացանաձգութեան են ենթարկել գնացքը և ստիպել են մի դեռատի աղջկայ։

ՊԱՐԻԶ.—Երէկ Թշնամու զօրքերը հեռացան Կօմպիէնից և Սանլիից։

ԲՕՐԴՕ.—Մամուլի բիւրօն յայտնում է. «Մեր ձախ զօրաթևում գերմանական և ֆրանսիական զօրքերի փոխադարձ տեղադրութիւնը էական փոփոխութիւններ չենթարկվեց։ Ըստ երևոյթին, վերջնականապէս խափանվել է Թշնամու թիկունից (обходное) շարժումը։ Լօթարինգիայում և Վոգէզներում՝ մեր զօրաճակատի աջ և ձախ մասերում դրութիւնը մնում է անփոփոխ։

Պարիզում, որից Թշնամին ներկայումս հեռու է կանգնած, քաղաքը ամրացնելու աշխատանքները եռանդով շարունակվում են։ Մօբիժում ամրակոծութիւնը շարունակվում է չափազանց տաք կերպով. բերդը պաշտպանվում է, չը նայած որ նրա երեք ամրութիւնները քանդվել են։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Ֆրանսիական պատերազմաբեմում տիրող դրութեան մասին հեղինակաւոր աղբիւրներից մատնանշում են, որ ֆրանսիական և մեզ դաշնակից զօրքերի արիութիւնը, նաև նրանց վարպետ զօրաշարժումները թոյլ չը տուին գերմանացիներին իրագործել իրանց ծրագիրները։ Գերման զօրքը փորձում է ընդարձակ տարածութեամբ անցնել անգլօ-ֆրանսիական զօրքերի թիկունքը։ Բայց այդ դեռ հաստատ չէ ներկայումս, թէ այդօրինակ շարժումը չէ հանդիպանում չափազանց յանդուգն գերմանացիների համար։ Ֆրանսօ-անգլիական զօրքերը, որոնք բանական են ամբողջ զօրաճակատում, հնարաւորութիւն չունէին զատել բաւականին ոյժ՝ գերմանացիների շարժումը դէպի Ֆրանսիայի ներսը կանգնեցնելու համար, սակայն դաշնակիցները խուսափեցին հնարաւոր պարտութիւնից, դնորհիւ նրանց ձախ զօրաթևի արագ կենտրոնացմանը։ Անկասկած է, որ, զոհաբերելով գեղեցիկ երկրի բաւականին տարածութիւն, ֆրանսիական զօրքերը վարպետօրէն ներհակում է թշնամու զօրաշարժումներին և խոր վէրքեր են պատճառում Թշնամուն։ Նա քաշում է Թշնամուն երկրի ներսը, ուր Թշնամին հեղուտութեամբ կարող է միայնակ մնալ, և չը նայած գերմանացիների՝ ըստ երևոյթին աջողակ շարժման, ֆրանսիացիք չեն տալիս նրա ձեռքը ոչ պատերազմական աւար, ոչ էլ նպատակին շատով հասնելու յոյս։

ՊԱՐԻԶ.—Զինուորական իշխանութիւնները տեղեկացնում են, որ գերմանացիք շարունակում են լայն թիկնոցից շարժում առաջ։ Վայ նման մի կողմ Թողնելով Պարիզը ամրութիւնները և դիմելով դէպի հարաւ-արևելք։

Զինուորական նահանգապետը յայտնում է, որ Պարիզի պաշտպանութեան համար նշանակված զօրքերը օգոստ. 23-ին ճակատեցին Թշնամու հետ, որ ըստ երևոյթին փակել է երթևեկութիւնը Ուրա գետով դէպի դերմանական աջ զօրաթևի խոշոր ոյժերը, այսինքն դէպի հարաւ-արևելք։ Տեղի ունեցաւ փոքր ընդհարում, որ մեզ համար վերջացաւ աջողութեամբ։

ԱՆՏՎԵՐՊԷՆ.—Երէկ գերմանացիք դուրս եկան Բրիւսսէլից և դիմեցին դէպի հիւսիս-արևմուտք հետևողէն Անտվերպէնը ծալափից կտրելու նպատակով, ճանապարհին քանդեցին երկաթուղային կայարանը և Բուրկէնհաուզի հետագիծը, յետոյ շարժվեցին Տէրմօնդի ուղղութեամբ։ Մալինի մօտերը գերմանացիք, յանկարծակիի գալով, սոսկալի չարդ կրեցին բէլգիացիներից, որոնք չրասոյզ արին քաղաքը։ Գերմանացիք, տարվելով հոսանքից, բերդերից թափվող կրակի տակ չանցան էին ազատել զէնքն ու ռազմամթերքները արկղները և ունեցան խոշոր կորուստներ։

ՕՍՏԵՆԴԷ.—Երկրի մի մասը, նաև Մալինը, բէլգիացի ինժեներները ջրասուզեցին։

ՀԱՐԱՒԱՍՑԻՆ ՌԱԶՄԱԴԱՇՏ

ՆԻՇ.—Թշնամին մի քանի անգամ կրակից Բէժանի բարձունքներից կրպակուէվացից սկսվող ճանապարհի ուղղութեամբ։

Ձերնօգօրցիք վանեցին Դրախօվի ուղղութեամբ Թշնամու յարձակումը։

Օգոստոսի 23-ին Թշնամու մի աէրօպլան երևաց Վայլէվի վրա և քաղաք նետեց 3 ռումբ, որոնցից մէկը ընկաւ հիւանդանոցի վրա։ Վնասուածքներ չը կան։

Բերին աւստրիացիներից գրաւված թընդանօթների մի մասը. մի մասը թողել են կրպակուէվացում, Ճնացածը գտնվում է Բելզրադում։

ԾՈՎԻ ՎՐԱ

ԼՕՆԴՕՆ.—Մամուլի բիւրօն պաշտօնապէս հաղորդում է, որ ստոյգ աղբիւրից ստացված տեղեկութիւնների համաձայն՝ 7 գերմանական հակաականաւ և ականանաւ կիլ են եկել սաստիկ վնասված։ Մի քանի ականանաւ ջրասոյզ են եղել ջրանցքի մօտ։

ԳԱՐՎԻՋ.—Անգլիական մի նաւակ բերեց գերմանացի մի լէյտենանտի և մի մեքենագործի, որոնք Հիւսիսային ծովում ընկել էին հիդրօաէրոպլանից։ Ռումբերը վերցնելուց յետոյ, նաւակը ջրասուզեց գործիքը։

ԼՕՆԴՕՆ.—Ծովակալութիւնը հաղորդում է, որ գերմանական նաւատորմը, բաղկացած 2 յածանաւից և 4 հակաականանաւից, Հիւսիսային ծովում ձեռք է ձգել 15 ձկնորսանաւ և ձկնորսներին տարել է Վիլհէլմսհաֆէն՝ իբրև պատերազմական գերիներ։

«Ռուսնօ» շոգենաւը, որ կպել էր ականի, խորտակվել է ծովափից դէպի արևելք 40 մղոն հեռաւորութեան վրա։ Նաւատաները և ճանապարհորդները, բացի 20 հոգուց, ազատվել են։

ՏՕԿԻՕ.—Եապօնական 2 հիդրօպլան ռումբեր նետեցին Կիաօ-Ջաոյի վրա և վերադարձան անվնաս։

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հետ. Գործ.)

22 օգոստոսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Կամքիս Խաչին Թոյլատրված է պատերազմական գործողութիւնների ժամանակ անմաքս ստանալ արտասահմանից բժշկա-սանիտարական իրեր։

Յարկիզ Սէլօյում կատարվեց Միխայլովան և Նիկոլայևան իմժենէրական դպրոցների իւնկէնների օֆիցէրութիւն ստանալը։ Ներկայ էին զինուորական մինիստրը, բարձրաստիճան զինուորականներ և Կայսրի շքախմբի անձինք։ Ժամը 2-ին ժամանեցին Թագաւոր Կայսրը և Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրովնան Գահաժառանգի և Օգոստափառ Դուստրների հետ։ Կայսրը, անցնելով իւնկէնների առաջից և արժանացնելով նրանց ողջոյնի հարցերի, դիմեց նրանց հետևեալ խօսքերով.

Ձիշդ ցէք, իւնկէներ, որ դուք մըտնում էք մեր պանծալի զօրքի շարքերը Ռուսաստանի համար առանձնապէս նշանաւոր ու պատմական ժամանակում և դրանով պարտական էք առաւել մեծ չանքով ու եռանդով վերաբերվել դէպի ձեր առաջիկայ ծառայութիւնը։ Ձիշդ ցէք իմ խրատը. հաւատացէք Աստուծուն և մեր հզոր հայրենիքի փառքին ու մեծ ապագային, դէպի ձեր իշխանաւորները վերաբերվեցէք լիակատար յարգանքով ու միանդամայն հնազանդվեցէք նրանց, չը քննելով ձեր մեծերի գործողութիւնները։ Ազնիւ ընկերներ եղէք իրար հետ, խիստ, սակայն հայրական արդարացի վերաբերմունք ցոյց տուէք դէպի ձեզ ենթարկվածի զինուորները, ունենդրելով նրանց մասը կարիքներին և ամեն կերպ օրինակ ծառայելով, ինչպէս ծառայութեան մէջ, այնպէս և նրանից դուրս։ Օրհնելով ձեր մանկիը մեր հզոր զօրքի մէջ, շնորհաւորում եմ ձեզ օֆիցէր դառնալը։

Իւնկէրների մեծադղրդ «ուռա» ծածկեց Կայսրի ամենաողորմած խօսքերը։

Միխայլովների խորհրդի նախագահը յայտնեց մինիստրների խորհրդին, որ Թագաւոր Կայսրը օգոստոսի 22-ին Բալթագոյնս հրամայել բարեհաճեց դինու, սպիրտի և օղու վաճառման գոյութիւն ունեցող արգելքը ամբողջ պետութեան մէջ երկարել մինչև պատերազմական ժամանակի վերջանալը։ Միխայլովների խորհուրդը որոշեց Միապետի այդ կամքի մասին յայտնել Ֆինանսների մինիստրին և պատշաճ գործադրութիւն և կարգադրութիւն։

ՄԻՆՍԿ.—Բերին 1200 աւտոբուսի օֆիցէրի և զինուորի, նաև պատերազմական շատ աւար։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Կամքիս Խաչի գլխաւոր վարչութիւնը վճռեց Թոյլ տալ կին-բժիշկներին աշխատել պատերազմաբեմում, որոշելով որ ամեն մի դաշտային հիւանդանոցում պէտք է լինեն յամենայն դէպս երկու տղամարդ բժիշկ. դաշտային հիւանդանոցներում կարելի է նշանակել իւրաքանչիւրում երկու կին-բժիշկից ոչ աւելի։

ՄՕՍԿՎԱ.— Քաղաքագլխի պաշտօնական տարը ռուսաց զօրքի փառաւոր յաղթութիւնների ափերով չերմ խօսքերով շնորհաւորական հեռագրեր ուղարկեց Մօսկվայի քաղաքային ինքնավարութեան և բնակիչների կողմից Գերագոյն Զօրահրամանատարին և գնդերալներ Ռուզսկիին և Բրուսիլովին։

Պետ. Հետ. Գործ. ատանում է դարձնել բազմաթիւ հեռագիրներ հասարակական օգնութիւն կազմակերպելու մասին վիրաւոր և հիւանդ զինուորների համար։

Սավինայի առաջարկութեամբ Կայսերական Թատրօնական Ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողովը հեռագիր ուղարկեց ընկերութեան օգոստափառ նախագահ Մեծ Իշխան Սերգէյ Միխայլովիչին, խնդրելով առ ոտս Թագաւոր Կայսրի արկանել Ընկերութեան անդամների հաւատարիմ զգացմունքները։

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Ռուսաստանի զանազան մասերից տեղեկացնում են, որ ամենուրեք

ՄՇԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՍ

(Գլխ. Հրտ. Գործ.)
23 օգոստոսի

ՊԱՐԻԶ.—«Petit Parisien»-ը հետևյալ տեղեկությունն է հաղորդում, որ Բելգիայի XV պատվո կայազորը և իր հրամանատար գեներալ Լեմանը գերի են ընկել գերմանացիների ձեռքը։ Գերմանացիները գերի վերցրին նաև 4 հրանոթ և 4 գունդ։ Ամբողջ կայազորը կազմում էր 25 հազար մարդ։

ՀԱՄԲՈՒՐԳ.—Ֆրանկֆուրտեր Զայտունգը հաղորդում է, որ Ֆրանկֆուրտի զորանոցներում ամբողջ գերմանական բանակի համար պատրաստվում են 2 միլիոն հագուստ։ Ամեն օր 10 հազար հագուստ պատրաստ է լինում

ԱՄԵՆԱՀԱՐՈՒՍՏ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ

«Le Deum laudamus» հրատարակ։

Ֆրանսերէն «Ե. Եհ.»-ն, որ Հայկական հարցի մասին կը հրատարակէ ամսական մէկ տետր, ներկայ տարուան Յունիսի տետրին մէջ կը գրէ.

«Ամենայն հաւատացեալ հայ, որ ունի ազգային զգացում եւ ազգային պատկանելութեան գիտակցութիւն, ամենայն հայ, որ ունի ազգային ինքնապահպանութեան բնազդ, ամենայն հայ, որ ունի ազգային ինքնապաշտպանութեան ոգի, ամենայն հայ, որ ունի ազգային ինքնասիրութիւն, ամենայն հայ, որ ունի ազգային ինքնագիտակցութիւն, ամենայն հայ, որ ունի ազգային ինքնահաստատման կամք, ամենայն հայ, որ ունի ազգային ինքնաճանաչման ձգտում, ամենայն հայ, որ ունի ազգային ինքնաբացայայտման ցանկութիւն, ամենայն հայ, որ ունի ազգային ինքնաիրացման տենչ, ամենայն հայ, որ ունի ազգային ինքնակատարելագործման ձգտում, ամենայն հայ, որ ունի ազգային ինքնաբարելաւման ոգի, ամենայն հայ, որ ունի ազգային ինքնաբարոյականացման ձգտում, ամենայն հայ, որ ունի ազգային ինքնաբարեկարգման ոգի, ամենայն հայ, որ ունի ազգային ինքնաբարեփոխման ձգտում, ամենայն հայ, որ ունի ազգային ինքնաբարեկեցութեան ոգի, ամենայն հայ, որ ունի ազգային ինքնաբարգաւաճման ձգտում, ամենայն հայ, որ ունի ազգային ինքնաբարգաւաճման

Ծաքանակ զօրքերի ընդհարումը հարիւրաւոր վիրաւորներ ստացողները տարածուեցաւ ամբողջ Գերմանիայի վրայ։ Ոչ միայն վիրաւորները, այլ նոյնիսկ զինուորական ատենները ոչ թէ մի, այլ երկու անգամ փոխադրուեցան օրուայ ընթացքում։ Մուկդենեան 000 հիւանդանոցները տեղ էին 14 օր։

Ներկայ պատերազմների գլխաւոր նպատակն է ոչ այնքան քաղաքների ու ամրոցների գրաւումը, այլ հակառակորդի զօրքի ընկճումը։ Քանի որ զօրքը չէ ընկճուած, կենդանի ոյժը խորտակուած չէ, հակառակորդը հնարաւորութիւն ունի ընդդիմադրելու, եթէ մինչև իսկ երկրի մի մասը թողած լինի թշնամուն։

Դրա փայլուն օրինակն է Հայրենական պատերազմը։ Ռուսական զօրքերի հրամանատարը՝ Կուտուզովը մինչև իսկ Մոսկուան թողել թշնամուն՝ Նապոլէոնին, որպէսզի զօրքը պահպանած լինի պատերազմի համար։

Հանճարեղ Նապոլէոնին չյաջողուեց ռուսական հողի վրա ընկճել հակառակորդի զօրքը, թողել Մոսկուան ու նահանջել։

Գերմանական զօրքերը պատերազմ հրամարակելուց անմիջապէս յետոյ սկսեցին յարձակողական պատերազմ և արշաւեցին թշնամու դէմ շատ օրոշ ծրագրով։ Մեծաքանակ զօրքերով անցնել Ֆրանսիական սահմանը և արշաւել Պարիզի վրա շատ դժուարին գործ էր։ Առաջին՝ ճանապարհը այդ ուղղութեամբ շատ երկար է՝ 300 վերստից աւել, երկրորդ՝ սահմանից դէնը Ֆրանսիական շատ ուժեղ բերդերն ու ամրութիւնները՝ շարքերով դասաւորուած մինչև Պարիզի շրջակայքը՝ շարունակ հալեցնելու էին գերմանական զօրքերը և շատ մեծ ժամանակ, ամիսներ կը տևէր նրանց գրաւումը, մինչդեռ արևելքից էլ Ռուսաստանը պատրաստուած կը յարձակվէր ու կանցնէր գերմանական երկիրը։

Ահա թէ ինչու գերմանական շտաբը ընտրեց աւելի կարճ՝ մօտ 200 վերստ, աւելի յարմար՝ հարթ ու ընդարձակ դաշտավայրերի ուղին Պարիզի վրա՝ այն է բելգիական երկիրը։ Սակայն այդ յարմարութիւնների արժէքը մեծ չափով ընկաւ, երբ Բելգիան անսպասելի կերպով Լիէժի ամրութիւնների առկ մօտ 15 օր յապաղեցրից գերմանական զօրքերի առաջխաղացումը։

Ֆրանսիական զօրքերը իրանց երկրի ամբողջ սահմանը հիւսիսից՝ Բելգիայի սահմանից մինչև հարաւ՝ շվեյցարական սահմանը, 250 վերստից էլ աւել տարածութեան վրա կենտրոնացան դիմադրելու թշնամու ներս խուժմանը։

Մի ամսվայ ընթացքում տեղի ունեցած մանր ու խոշոր ընդհարումներին առանձին նշանակութիւն չը պէտք է տալ, որովհետև դրանք ամենևին չեն որոշում պատերազմի վճռական ելքը։

Գերմանական զօրքերը ամենայն յամառութեամբ ու եռանդով հետևում էին իրանց շտաբի մշակած ծրագրի գործադրման, այն է Բելգիայից ներս խուժել Ֆրանսիա։

Այդ նպատակի իրականացման համար շատ շուտ և արագ կերպով կենտրօնացրին մեծ զօրք Լիէժի դէմ, շատ մեծ զոհեր տալով գրաւեցին ամրութիւնները և աւելի մտնեցան ֆրանսիական սահմանին։

Ֆրանսիական զօրքերին յիւացան անդլիական զօրքերը և հրամանատար գեներալ Ժոֆֆրը վճռեց լինել նախայարձակ, սկսել յարձակողական պատերազմը, նախաձեռնութիւնը իր ձեռքը ձգելու համար, և նաև այն պատճառով, որ մինակն է՝ թշնամին էր պատրաստվում իր վրա յարձակվելու։

Սկսվեց Շարլերուայի մօտ մի շաբաթ տևող ճակատամարտը։

Գործադրվեց նապոլէոնական մեթոդը՝ ճեղքել հակառակորդի կենտրօնը և առանձին-առանձին ջախջախել բաժանված թշնամու ոյժերը։

Այս առաջին խոշոր ճակատամարտը որոշելու էր, թէ որ կողմին է վերջ ի վերջոյ աջողվելու մղել յարձակողական և որ կողմին պաշտպանողական կռիւ։ Գերմանական զօրքերին աջողվեց ետ մղել ֆրանսիական զօրքերի յարձակումները շնորհիւ միմիայն այն հանգամանքի, որ նրանց աջողվում է շատ շուտ մեծ զօրքեր կենտրօնացնել պահանջվող վայրում։ Գենեռալ Ժոֆֆրի ծրագիրը չյաջողվեց, անապատելի կերպով հէնց կենտրօնում թշնամին շատ շուտ այնպիսի ոյժ կենտրօնացրեց, որ ֆրանսիական զօրքերի բոլոր յանգերն ի զուր անցան։

Ժոֆֆրը այդ ճակատամարտից յետոյ ստիպված էր նահանջել, իսկ գերմանական զօրքերը սկսեցին առաջ գնալ, անցան սահմանը և հասան նպատակին, այն է՝ կարճ ճանապարհով մանել Ֆրանսիա։

Ներկայումս գերմանական հիւսիսային բանակը, կամ նրանց աջ թևը աստիճանաբար առաջ է գնում դէպի Պարիզ՝ Ուազ գետի հովիտով, իսկ ֆրանսիական բանակի ձախ թևը աստիճանաբար նահանջում է երկրի ներսը։ Ֆրանսիայի համար պատերազմը այժմ դարձաւ զուտ պաշտպանողական, իսկ Գերմանիայի համար բացառապէս յարձակողական, միմիայն մի բանի շնորհիւ, այն է՝ զօրքերի ահռելի քանակութեան և ապագ կենտրօնացման պահանջվող վայրում։

Ա. Նազարէթեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՆԻՍՏԸ

—

Հինգշաբթի, օգոստոսի 21-ին, փոխարքայի պալատում կայացաւ Պատերազմից Վնասվածներին Օգնող Կովկասեան Կոմիտէի երրորդ նիստը, կոմսուհի Ե. Ա. Վորոնցովա-Դաշկովայի նախագահութեամբ։

Նիստը բացելուց յետոյ կարդացվեց կոմիտէի հաշիւը, որից երևաց, որ կոմիտէը օգոստոսի 12-ից մինչև 21-ը մուտք է ունեցել 98,670 ր. 33 կ.։

Այնուհետև տեղեկութիւններ տրվեցին, որ Պատերազմից Վնասվածներին Օգնող կոմիտէաներ են բացվել Անդրկովկասի հետևեալ վայրերում՝ 1) Շուշում, 2) Բագուում՝ ա) քաղաքային կոմիտէաց, բ) Հայոց Կուլտ. Միութեան, գ) Բագուի նաւթարդիւնաբեր. բողների կոմիտէաց, 3) Նուխում, 4) Բաթումում՝ ա) Կարմիր Խաչի ճիւղը, բ) քաղաքային կոմիտէաց, 5) Քութայիսում, 6) Թիֆլիսում, 7) Սղնախում և 8) Նոր-Բայազէտում։

Ապա տեղեկութիւններ տրվեցին եղած նուիրատուութիւնների ասիթով, որոնց մասին պարբերաբար տեղեկութիւններ ենք տալիս մեր թերթում։

Վերջում որոշվեց կոմիտէի նիստերը այսուհետև միշտ նշանակել հինգշաբթի օրերը, երեկոյեան ժամը 8-ին։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

◆ Անդրկովկասի երկաթուղիների վարչութեան կից կազմված առանձին կոմիտէը հրատարակել է պարտադիր նոր որոշումներ, որոնցով, ի միջի այլոց, արգելվում է՝ երկաթուղիների բոլոր ծառայողներին խոսակցութիւն ունենալ կողմնակի անձանց հետ՝ զօրքեր, ռազմամթերքներ տեղափոխելու մասին, նոյն գիւտերական վարչութիւնների և ճանապարհների ադմինիստրացիաների կարգադրութիւնների մասին։ Ծառայական պարտականութիւնները կատարելու միջոցին, նաև հեռախօսով խօսելու և հեռագիրներ ուղարկելու միջոցին արգելվում է զօրձածել ուրիշ ոչ մի լեզու, բացի ռուսերէնից։ Արգելվում է նոյնպէս կողմնակի անձանց և երկաթուղիների ծառայողներին, որոնք ոչ մի յարաբերութիւն չունեն զօրքերի տեղափոխութեան հետ, մօտենալ գիւտերական գնացքներին և գիւտերական պահեստների հետ խոսակցութիւն սկսել։ Արգելվում է երկաթուղային կայարանների բեռնակիրներին իրանց՝ ճանապարհորդների համար արած ծառայութիւնների համար (վագոնից ապրանք իջեցնել, կամ ապրանքը վագոն տանել) 20 կոպէկից աւելի պահանջել, դրա մէջ հաշուած տոմսակ առնելու և բագաժը տանելու ծառայութիւնները։

◆ Քաղաքագլուխը մի հեռագրով դիմել է արտաքին գործերի մինիստրութեան 1-ին դեպարտամենտին, խնդրելով պարզել, թէ ծրագիր են գանվում պատերազմի պատճառով Գերմանիայում մնացած քաղաքային հետևեալ ծառայողները՝ սանիտարական բժշկական վերատեսուչ Կ. Ն. Սաւափեան, քաղ. վարչութեան գործավարներ տիկին Սաւրգունովա և Տէր-Մինասեան։

◆ Ոստիկանապետը հետևել կարգադրութիւնն է արել թաղական պրիստաւներին. «Սրանով առաջարկում եմ խիստ հսկել մայրաքաղաքի թերթերի դէների նկատելի բարձրացման վրա, որ անում են լրագրավաճառները և թոյլ չը տալ առանձին համարները բարձր գնով ծախելու, այլ այն գնով, ինչ որ կնիքով նշանակված է թերթերի վրա մայրաքաղաքի մամուլի կօմերցական կողմից, նոյնպէս և այն դէպքերում, երբ լրագրավաճառները ստանում են նրանց անմիջապէս հրատարակութեան տեղից կամ ուրիշ ճանապարհով։ Այս կարգադրութիւնը խախտող անձնաւորութիւնների մասին անմիջապէս յայտնել ինձ համապատասխան կարգադրութիւնն անելու՝ թերթ վաճառելու իրաւունքից զրկելով նրանց»։

◆ Օբլենքով զէնքի կանչված հարկատու դասակարգին պատկանող պահեստի զինուորների ընտանիքները ազատ են մեշչանական վարչութեան հասարակական տուրք վճարելուց։ Մինչդեռ մեր մեշչանական վարչութիւնը հաւաքում է այդ տուրքը։ Պատերազմից վնասվածներին օգնող քաղ. կոմիտէը առաջարկել է մեշչանական վարչութեանը՝ դադարեցնել այդ տուրքի հաւաքումը, յայտնելով որ հակառակ դէպքում այդ մասին կը յայտնվի նահանգապետին և վարչական միջոցներ ձեռք կառնվի։

◆ Կէրակի, ամսիս 24-ին, երկաթուղային հիւանդանոցին կից բացվեց զինութեան քոյրերը պատրաստելու համար դասընթացք։ Բացումից առաջ կատարվեց հանդիսաւոր մաղթանք։ Դասընթացքներում ընդունված են 80 քոյրեր։

◆ Պատերազմից վնասվածներին օգնող քաղ. կենտրօնական կոմիտէը դիմել է տեղական ակումբների աւագներին, խնդրելով կոմիտէին ուղարկել պատերազմի կարիքների համար հաւաքված գումարները։ Նոր ակումբը, օգոստոսի 23-ին, ներկայացրեց 116 ր. 82 կ.։ Միւս ակումբները առ այժմ իրանց հաւաքած գումարները չեն ներկայացրել։

◆ Անդրկովկասի սիւնի մահմեդական ների հոգևոր վարչութեան ծառայողները որոշել են զէնքի կանչված պահեստներին ընտանիքների օգտին իրանց ռաճիկներից 1% յատկացնել։

◆ Ռուսական էքսպօրտային պալատը, կամենալով օգտագործել ներկայ ծանրնալով ռուսական ապրանքներով պարսկական շուկան վերջնականապէս գրաւելու համար, դիմել է բօրսային կոմիտէին, խնդրելով համապատասխան յուցմունքներով մանրամասն տեղեկութիւններ ուղարկել ռուս պարսկական ապրանքների առևտրի մասին։

◆ Ներկայ անցքերի պատճառով և Ռուսաստանի դաշնակից Ֆրանսիական քաղաքի զօրքի կռիւները յաւերժացնելու նպատակով քաղ. վարչութիւնը որոշել է նեմեցկայա փողոցը, որ գտնվում է Կուկիայում, վերանուանել Ֆրանցուզսկայա։ Այդ մասին կենսացում է ներկայացվելու դումային։

◆ Այս օրերս վերաշինութեան աշխատանքներ են սկսվելու քաղաքային այն դպրոցներում, ուր պահեստներ էին բնակվում։ Քաղ. վարչութեան ուսումնարանական յանձնաժողովը դրա հետ միասին քննելու է և դպրոցների զբաղմունքները իր ժամանակին սկսելու հարցը։

◆ Էլեքտրաքարշի երթևեկող վագոնների թէ պակասութեան պատճառը, ինչպէս պարզվում է, այն է, որ նոր ընդունված ծառայողները անվարժ են և, բացի այդ մազութի պակասութիւն է զգացվում։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 25 օգոստոսի

«Աղբիւր» Տարագիր խմբագիր պ. Տիգրան Նազարեանը, որ գնացել էր Եւրոպա՝ մասնակցելու կօնգրեսին մասնակցելու և այնուհետև ճանապարհորդել է և եղել է Բելգիան, Բրիւսէլ, Կոպէնհագէն, Լօնդօն, Պարիզ, Ժընեվ, մինչև այժմ դեռ չէ վերադարձել և յուլիսի 10-ից յետոյ ոչ մի տեղեկութիւն չունենք նրա մասին, ուստի խնդրում եմ ով տեղեկութիւն ունի, թէ ուր է գտնվում այժմ պ. Տիգրան Նազարեանը, բարեհաճի հաղորդել մեզ։

Բժշկ. Բ. Նազարեթեան

—

Մեղրի, 25 յուլիսի

«Մշակի» № 157-ում «Անկամայ սպանութիւն» թղթակցութեանս եղելութիւնը ինձ պատմողը անճիշդ է պատմել։ Այժմ պարզվում է, որ Թումանեանցը, տեսնելով Ղազարեանցի դրգռված դրութիւնը, որպէս ակար մարդու խղճալով, Ղազարեանցին մի կողմ է քաշել՝ նրան հանգստացնելու։ Ըստ երևոյթին Ղազարեանցը, ինքնագրգռման ժամանակ, յանկարծամահ է եղել սրտի պայթումից։ Ե. Վարդանեանց

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակ է

Ց. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻ

«ԻՐԱՇԻՐԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՎԱԾ ԹԻՒԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ»

Գ. տարբ. Գ. հրատ., բարեփոխված մեծ քանակութեամբ աւելի բարդ խնդիրներով և որոշ տեսակների վերաբերեալ խնդիրների առանձին խմբակցութիւններով։

Պահեստը «Գիր» գրախանութում է, ուր վաճառվում են այս գրասգրքի նաև Ա.+Բ. և Դ. հատորները։

Ա.+Բ-ի գինը 30 կ., միւսներինը՝ 35-ական։

(30, 3, 7) 807. 4—1

Մասնաւոր և պետական գրասենեակների համար իմ կազմած

Կրօնի դասագրքերը

Ա. տարի . . 25 կ.
Բ. » . . 25 »
Գ. » . . 25—30 կ.
Դ. » . . 30 »
Ե. » . . 50 » (Հին-Ուխտ)
Զ. » . . 50 » (Նոր-Ուխտ)
Է. » . . 45 » (Գործք-Առք.)

Կարելի է ստանալ՝

1. Ինձ մօտ՝ Тифлисъ. Бебутовская 52.
2. «Գիր» գրավաճառանոցում (որտեղ է և պահեստը) և՝
3. Միւս հայ գրավաճառների մօտ։

Կանխիկ վճարողներին 25% զեղչ։

Սահակ ա.-ք. Սահակեանց

(Հ. շ.) 792. 5—2

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

Քամալեանց Մ. դպրի

Կազմած

„ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔ“

դասագիրքը, Ե. տարի. Թոյլատրած Վ.Հ. փոխ. դիւանից՝ Էջ 176, գինը 50 կ.։ Մինչև օրս նրա յօրինած կրօնի միւս գրքերը՝ Ա. տարի 10 կ., Բ. տարի 20 կ., Գ. տարի 30 կ., Դ. տարի («Մարգարէներ») 40 կ., վաճառվում են Թիֆլիսի գրախանութներում 20% զեղչով։

(Հ. շ.) 761. 5—4

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՒՆ ԳՆՂՈՂ

ԱՌԱՋԻՆ

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Ն. Ռ. ԱՔՐԱՀԱՄԻԵԱՆԻ

Գոյութիւն ունի 1895 թ.

Հեղինակ առևտրական հաշուապահութեան ձեռնարկի և գործնական մասնագիտական ձեռնարկների։

Ցալիս է երկու տեսի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ԱՄՍԵԱՑ ԴԱՍԸՆԹԱՑՔՈՎ ամենօրեայ պարապմունքներով։

Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։

Առանձնատներ տրվում են մինիմարութեան նոյտութեամբ։

Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1914 թ.։

Խնդրագիրների ընդունելութիւնը օգոստոսի 25-ից, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը։

Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիարար։

Դասընթացքների կից հատատված են քիչ պարապված անձանց համար առանձին պարապատական և լրացուցիչ դասարաններ առևտուր լեզուի և թւաբանութեան համար։

Ընձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну. Николаевская, 22, Телефонъ 7—44. (Հ.Հ.) 749. 0—9

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ իրաւունքներով և ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉՔՔԱՐԵԱՆ ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

Ընդունել. և լրացուց. քննութ. օգոստ. 26-ից։ Այբուբեն. բաժ. առանց քննութ.։ Պարապմունքները սեպտ. 1-ից. կուրսերում՝ սեպտ. 15-ից։

(Կ.Հ.Հ.) Միխայլովսկի պ. № 36. 779. 10—4

ԳԱՅԻԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑՈՒՄ

Ընդունելութեան քննութիւնները և վերաքննութիւնները սկսվելու են օգոստոսի 26-ից։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 1-ից։

(Հ.Հ.) 791. 5—3

Տեսուչ դպրոցի՝ Ս. ԱՐՈՎԵԱՆ

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՕՑԵԱՆԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/8. Տելէֆօն № 976.

Տալիս են երկսեռ անձերին մանաւանդ առևտրական կրթութիւն։

Դասընթացքն աւարտողներին տրվում ենատեստատներ։

Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձեով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնում են ըստ կանոնների։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., դիպլ., ֆրանս., ամերիկեան, բանկային և գործարանական). 2) Առևտրական իւրացութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնագրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Կալիչոգրաֆիա (ամենապատ ձեռքի ուղղութիւն). բ.) ազատապրիչ. 1) Osaur ընդունիր. 2) Տրագրութիւն. 3) Դակտիլոգրաֆիա (ըմբինգտն և ուր.) և 4) Առևտր. Թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և գատ-գատ։ Ունկնդիրների թէ չառաւելեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարթաղթագրութեանների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յան վարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիարար կուրսերի չէնքում։ Կուրսերը փիլիսոներին յանձնարարում են հաշուապահներ, օպտականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացքում ներքին ընդունելութեամբ աշքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 334 ունկնդիր, որոնցից 67 հոգի իգական սեռից)։

Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՑԵԱՆ

(օ. մ.) 730. 0—16

ԱՀ. ԸՆԿ. Тифлис. Металл. Заводъ

Ինժեներ Գ. Զ. ԵՍՐԱԼԵԱՆ և ԸՆԿ.

Թիֆլիս, Կիլիսկայա, № 9, տէփ. տուն

Տեօրէնի տէլէֆօն № 9. Կառավարչի բնակարան 14—78.

ՁՐԱԳՈՒՅՑՆԵՐ

Գործարանը պատրաստում է եւ կառուցանում տրանսմիսիաներ, Քրիկգիոն մուֆտաներ, սեղմիչ ճախարակներ, ճախարականիւներ, շարժիչ-լծեւեր, ատամնաւոր անիւներ, բէգուիատօրներ, փոկեր եւ այլն։

(Հ.) 175. 25—21

ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

ԳՐԻԳՈՐԻՍ աւ.-քահ. ԵՐԶՆԿԵԱՆՑԻ

1) «ԹԻՒԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ», ըստ Գօլդենբէրգի, I մասն. I և II տարբ, 9—17 տիպ. . . . . 30 կ.
2) «ՆՈՒՅՆԵՐ», II մասն, III և IV տարբ, ըստ Գօլդենբէրգի, 5—9 տիպ. . 35 կ.
3) «ՈՒՍՈՒՄՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՐԹԵԱՆ», II տիպ. պատկերազարդ. . 30 կ.
4) «ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԴԻՏՈՒԹԻՒՆ», II տիպ. . . 30 կ.
5) «ՏԱՐՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ», շատ դիւրամատչելի, ամբողջ կուրս. 60 կ.
6) ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ». . . . . 1 ր.

Վաճառվում են իր մօտ (Грибоѣдовская, 20) և «Կենտրօնական», «Գիր» ու «Նուաստ» բերդ» գրավաճառանոցներում։ Հեղինակից գնողներին 30% զեղչ։ կարելի է ստանալ և վերադիր վճարով։ Դրանք բոլորն էլ մեր դպրոցներում ընդունված են։ 790. 6—4

ԱՐՇԱԿ ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆԻ, ՏԻԳՐԱՆ ՌԱՇՄԱՃԵԱՆԻ և ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

կազմած

ԴԱՍԸՆԿԵՐ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ Այբբենարան-Ընթերցարան. Վեցերորդ տիպ, բարեփոխված. . 40 կ.
ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ . . . Հինգերորդ տիպ, բարեփոխված. . 50 կ.
ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ . . . Չորրորդ տիպ, բարեփոխված. . 60 կ.
ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ . . . . . 70 կ.

Ա. Բ. և Գ. տարիները ենթարկված են հիմնական փոփոխութեան. ճոխացված են ճոռագիր յօդուածներով, պատմելու, շարադրելու եւ նկարելու պատկերներով։

Դիմել «Գիր» գրավաճառանոցին. Երևան՝ «Աւարատ» և Ռուսհանդիսեան գրախանութներին. կազմողներին՝ Երևան, Թեմական Դպրանոց։ (Հ.Հ.) 760. 6—5

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

Հայոց Ազգագրական Ընկ. հրատարակութեամբ

Հայաստանի աշխարհագրութիւն

Կազմեց Ա. Տէր-Ծակոբեան, նախկին ուսուցիչ Հայաստանի աշխարհագրութեան Ներսիսեան դպրոցում։

300 երես, բազմաթիւ պատկերներով և քարտէզներով։

Գիրքը, որ 33 տարվայ աշխատութեան արդիւնք է, կարող է ծառայել թէ իբրև ԴԱՍԱԳԻՐՔ, որովհետև էական մասը տպված է խոշոր (№ 12) տառերով և ի նկատի է առնված դպրոցական ծրագիրը և թէ իբրև օժանդակ ձեռնարկ Հայոց պատմութեամբ պարապողներին, ուրվհետև բազմաթիւ պատմական տեղեկութիւններ և նկարագրութիւններ տպված են մանր (№ 10) տառերով։

Ազգագրական Ընկերութիւնը ցանկանալով ամեն կերպ նպաստել Հայաստանի աշխարհագրութեան ուսուցման, մանաւանդ որ բացի կազմողին հոնորար չը վճարելուց, որ պագրութեան ծախսն էլ նուէր է ստացել նրանից, գրքի գինը նշանակում է չափազանց արժան՝ 50 կոպէկ, իսկ ուղղակի Ընկերութեան գրասենեակից (Лермонтовская 1, Тифлисъ) գնողների համար Գինն է ՄԻԱՅՆ 35 ԿՈՊԵԿ։ 801. 3—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ. Лорисъ-Меликовская улица, домъ казенный